



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2013թվականի N 8-Ն

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2013 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: /ԶԵԿ.
ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ/**

Թե զեկուցողը և թե ելույթ ունեցողները նշեցին, որ գյուղապետարանի ծառայողական ավտոմեքենան ժամանակի ընթացքում քայքայվել է և այլևս շահագործման ենթակա չէ, իսկ տարեսկզբին համայնքային բյուջեով նախատեսված գումարը չի համապատասխանում գնվող ավտոմեքենայի արժեքին, ուստի համայնքի ավագանին ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ *որոշում է*.

1. Թույլատրել գյուղապետին.

Համայնքային 2013 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները:

1.Ֆոնդայն բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից պակասեցնել 1798,5 հազ. դրամ, այն ավելացնել օրենսդիր, գործադիր մարմինների պետական կառավարում հաշվի գործառնական դասակարգման 1-1-1-51 և տնտեսագիտական դասակարգման տրանսպորտային սարքավորումներ 5121 հոդվածին:

2. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 100.0 հազ. դրամ պակասեցնել և այն հատկացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» ծրագրի գործառնական դասակարգման ծրագրի բաժին 1, խումբ 6, կարգ 1, ծրագիր 55 տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածին:

- Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը հաստատել 2958.0 հազ. դրամ:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՄԴԱՐ

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

6. ՄԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՄ

(Handwritten signatures for items 1-7)



(Handwritten signature)

ԴԱՆԻԵԼ ՀԱՎՈՐՅԱՆ